ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
«ԳՈՐԻՍԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԲԸ

«9» օգոստոս 2024թ.

Ք. Գորիս, Գ.Տաթևացի 31, Էլ. Փոստ՝ info@gorismc.am
☏ (0284) 2-21-52

ՀՐԱՄԱՆ 330

<ԱԳԱՍՏ> ՍՊԸ-ԻՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԵՑՈՂ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ՆԵՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով <Գնումների մասին> ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի <ա> պարբերության և 2-րդ մասի պահանջները, ինչպես նաև այն, որ <Ագաստ> ՍՊԸ-ն խախտել է <Գորիսի բժշկական կենտրոն> ՓԲԸ-ի և <Ագաստ> ՍՊԸ-ի միջև 02.02.2024թվականին կնքված <ՍՄԳԲԿ-ԳՀԱՊՁԲ-24/3/1> ծածկագրով գնման պայմանագրով ստանձնած բժշկական նշանակության ապրանքների ՝ չափաբաժին 12 (Ակու չեկ պերֆորմա թեստ երիզներ) մատակարարման պարտավորությունը, որը հանգեցրել է պայմանագրի միակողմանի լուծմանը.

ՈՐՈՇԵՑԻ՝

<Գորիսի բժշկական կենտրոն> ՓԲԸ-ի հետ 02.02.2024 թվականին կնքված <ՍՄԳԲԿ-ԳՀԱՊՁԲ-24/3/1> ծածկագրով գնման պայմանագրի (այսուհետ Պայմանագիր) կողմ <Ագաստ> ՍՊԸ (ՀՎՀՀ՝ 00435781, գործունեության հասցեն՝ ք.Երևան, Տ.Պետրոսյան 31/1) Պայմանագրով ստանձնած պարտավորությունները 12 -րդ չափաբաժնի մասով խախտելու և վերջինս միակողմանի լուծելու հիմքով՝ գրավոր ուղարկել լիազորված մարմնին՝ ՀՀ Ֆինանսների նախարարությանը, վերջինիս ներառելու գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

ՏՆՕՐԵՆ՝ Դ.ՄԱՇՈՒՐՅԱՆ